ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2023թվականի N 649-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՌԱՖԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արաքս համայնքի Ջրարբի գյուղի բնակիչ Արմենուհի Ռաֆիկի Ներսիսյանի 2023 թվականի հունիսի 29-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի բնակիչ Արմենուհի Ռաֆիկի Ներսիսյանին, Ալբերտ Վանիկի Ներսիսյանին, Անի Ալբերտի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող /04-086-0002-0017/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 102,7քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 69,9քմ արտաքին մակերեսով ծածկը, 4,3քմ արտաքին մակերեսով ջրավազանը, 15,5քմ արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, 2,9քմ պարիսպը համաձայն «Աստղիկ Մանուկյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023G7VWKE:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի շինությունների 1քմ-ի համար 1209 ՀՀ դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 725,4 ՀՀ դրամ, 1209*118.2=142904 /մեկ հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր չորս/, 725,4*77.1քմ=55928 /հիսունհինգ հազար ինը հարյուր քսանութ/ ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 142904+55928=198832 /մեկ հարյուր իննսունութ հազար ութ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 198832 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Ջրարբի գյուղի N900325183169 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 10
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 հուլիսի 2023թվականի N 650-Ա

ՄԵԼԻՔ ՀԱԿՈԲԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Մելիք Հակոբի Մելքոնյանի 2023 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Մելիք Հակոբի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող /04-085-0269-0005/ ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 148,7քմ արտաքին մակերեսով արտադրական պահեստը համաձայն «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023GHGDNU:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է արտադրական շինությունների 1քմ-ի համար 1813.5 ՀՀ դրամ, 1813.5*148.7քմ=269667 /երկու հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 269667 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Ջրառատ գյուղի N900325182153 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 10
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2023թվականի N 651-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արմեն Բալայանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-035-0121-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Գրիբոյեդով, 7-րդ փողոց 14 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 10
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 652-Ա

ԷՄԻՆ ԳԱԳԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր քաղաքացի Էմին Գագիկի Զաքարյանի 2023 թվականի հունիսի 2-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղում գտնվող քաղաքացի Էմին Գագիկի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող /04-005-0998-0003/ ծածկագրով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասում առկա կիսակառույց ինքնակամ 300.0քմ արտաքին մակերեսով շինությունը՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից տրված N30112022-04-0075 սեփականության վկայականը:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է հասարակական նշանակության շինությունների 1քմ-ի համար 2418 ՀՀ դրամ: 2418*300.0քմ=725400 /յոթ հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:
3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 725400 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Ակնաշեն գյուղի N900325152156 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 653-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14–ի N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 7–րդ ենթակետը և Ա/Ձ Քնարիկ Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Քնարիկ Մուրադյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2023 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 7–րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 654-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Դավիթ Ջավադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Դավիթ Ջավադյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2023 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 655-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14–ի N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 7–րդ ենթակետը և Ա/Ձ Երանուհի Լալայանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Երանուհի Լալայանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2023 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:

2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 7–րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 656-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Ձ Էմմա Կիրակոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Էմմա Կիրակոսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնք Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2023 թվականի 3-րդ եռամսյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:

2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ. ՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2023 թվական N 657-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով, հիմք ընդունելով 2012 թվականի մայիսի 24-ին կնքված «Ջրային հողամասի վարձակալության մասին» պայմանագիրը և վարձակալ Միեր Ցոլակի Սերոբյանի 2023 թվականի հուլիսի 7-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել քաղաքացի Միեր Ցոլակի Սերոբյանին 2012 թվականի մայիսի 24-ին իրեն վարձակալությամբ տրամադրված Արաքս համայնքի սեփականությունը հանդիսացող, Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող, ջրային նպատակային նշանակության, ջրային գործառնական նշանակության 1.4991 հա, 04-033-0224-0010 կադաստրային ծածկագրով հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու այլ անձի՝ վարձակալի հետ կնքված պայմանագրի պայմաններով:
2. Ենթավարձակալության պայմանագրի նկատմամբ կիրառվում են վարձակալության պայմանագրի կանոնները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 658-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Հարություն Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-012-0002-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ապագա, 2-րդ փողոց, 7 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 659-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արմեն Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-048-0003-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Լուսագյուղ, Ն. Դարբինյան փողոց, 1-ին փակուղի, 4 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2023թվականի N 660-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամաբ հաստատված կարգի 50–րդ կետովև հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների N 21062023-04-0072 տրված 21 հունիս 2023 թվականին և N 05112021 տրված 05 նոյեմբեր 2021 թվականին և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04048YUCBTRU.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող Մելիք Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-048-0004-0044 և 04-048-0004-0041 ծածկագրերով անշարժ գույքերի միավորումից տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Լուսագյուղ, Էջմիածնի խճուղի 15 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 11
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2023 թվականի N 661-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 12.07.2023 թ.-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը, համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության,

անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թ. հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
12 հուլիսի 2023թ.-ի
N 661-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի

Հ Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
2	Գասպար Հայկազի Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
3	Արա Ռոբերտի Նավասարդյան	Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական	Արաքսի համայնքապետարան
4	Նարինե Ռաֆիկի Դավթյան	Արաքս համայնքի ղեկավարի օգնական	Արաքսի համայնքապետարան
5	Տիգրան Սարգսի Նահապետյան	Ավագանի	Արաքս համայնքի ավագանի

6	Ասյա Իմատրայի Խաչատրյան	Արաքս համայնքի Գայ գյուղի դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2023 թվական N662-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի սեփականությունը հանդիսացող 0.1307 հա հողամասի /ծածկագիր՝ 04-005-0189/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական նշանակության, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2023 թվական N663-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Ջրարբի գյուղի սեփականությունը հանդիսացող 0.02 հա հողամասի /ծածկագիր՝ 0101-0028/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական նշանակության, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2023 թվական N664-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի սեփականությունը հանդիսացող 0.031 հա հողամասի /ծածկագիր՝ 04-035-0154, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղ. արտադրական/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2023 թվական N665-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի սեփականությունը հանդիսացող 0.0228 հա հողամասի /ծածկագիր՝ 04-035-0033-0006, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2023թվականի N 666-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արամայիս Սրապիոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0036-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Վ. Տերյան 5 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2023 թվականի N 667-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ՀԱՆԳՈՒՑՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 03-ի N39 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 1,150,000 /մեկ միլիոն հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ Արաքս համայնքի թվով 23 /քսաներեք/ հանգուցյալի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել՝ համաձայն կից ցուցակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թ. Հուլիսի 12
Արաքս համայնք

ՑՈՒՑԱԿ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ՀԱՆԳՈՒՑՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 667-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	Ազգանուն,անուն,հայրանուն	Հասցե	Անձը հաստատող փաստաթուղթ	Գումար ՀՀ դրամ
1.	Գևորգյան Գեղամ Անդրանիկի	գ.Արտիմետ	ն/թ013913306	50,000
2.	Բաղդասարյան Մկրտիչ Արծրունի	գ.Արտիմետ	AP0693843	50,000
3.	Մկրտչյան Արսեն Իշխանի	գ.Արտիմետ	AU0533441	50,000
4.	Հակոբյան Սեդրակ Մկրտիչի	գ.Արտիմետ	AS0696288	50,000
5.	Զորիկյան Մովսես Խաչիկի	գ.Ապագա	AT0513044	50,000
6.	Հարությունյան Հայկազ Անուշավանի	գ.Ապագա	AT0537668	50,000
7.	Բաղալյան Նորայր Ժորժիկի	գ.Ակնաշեն	ն/թ003439478	50,000
8.	Հակոբյան Հրանտ Հրայրի	գ.Ակնաշեն	BA2660753	50,000
9.	Կարապետյան Մարզպետունի Վանուշի	գ.Ակնաշեն	AU0648315	50,000
10.	Իբոյան Իբո Ալիի	գ.Ակնաշեն	AR0517402	50,000
11.	ՇուշանյանԱշոտ Հրաչիկի	գ.Գրիբոյեդով	AL0231742	50,000
12.	Մուրադյան Տիգրան Հայկի	գ.Գրիբոյեդով	ն/թ011399128	50,000
13.	Շուշանյան Դավիթ Աշոտի	գ.Գրիբոյեդով	ն/թ003187358	50,000
14.	Հովհաննիսյան Գագիկ Արշամի	գ.Գրիբոյեդով	AV0583893	50,000
15.	Ներսիսյան Ներսես Դերենիկի	գ.Գայ	AP0618835	50,000
16.	Սարգսյան Մարտիրոս Արամաիսի	գ.Գայ	AT0482683	50,000
17.	Սահակյան Վաչագան Մնացականի	գ.Մեծամոր	ն/թ008647273	50,000
18.	Թամոյան Կարեն Քյարամի	գ.Զրառատ	ն/թ008707895	50,000
19.	Հովհաննիսյան Սիրանուշ Սամվելի	գ.Զրառատ	ն/թ004353355	50,000
20.	Մանուկյան Գայանե Վռամի	գ.Զրառատ	ն/թ010620490	50,000
21.	Կարապետյան Ռուդիկ Ռոբերտի	գ.Զրառատ	ն/թ004427118	50,000
22.	Գուրգենյան Զուլետա Գուրգենի	գ.Զրարբի	AS0222061	50,000
23.	Հակոբյան Վարդան Անդրանիկի	գ. Զրարբի	AU0360201	50,000
				1,150,000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Մ.ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2023 թվական N668-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական ղեկավարի նստավայրի խցանված կոյուղագծի մաքրման աշխատանքների համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 1.6.1-ի (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) 4239 հոդվածից հատկացնել 39.375 (երեսունինը հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 12
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2023թվականի N 669-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրից դուրս գտնվող՝ 04-012-0108-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ապագա, 7 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 13
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2023թվականի N 670-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 24-րդ և 25–րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն բնակավայրի Բարեկամության փողոց 28/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության իրավունքով պատկանող 0.005 հա /կադաստրային ծածկագիր 0029-0029/ բնակավայրերի նպատակային նշանակության բնակավայրերի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 13
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2023 թվական N 671-Ա

ՍՈՖԻ ԼԵՈՆԻԴԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1–ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԱՐԴ1/0290/02/22 քաղաքացիական գործով 2023 թվականի հունիսի 27-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը, որի համաձայն՝ քաղաքացի Սոֆի Լեոնիդի Մկրտչյանը /ծնված՝ 06.03.2001թ./ ճանաչվել է անգործունակ, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձի մոր՝ Լուսինե Ռաֆիկի Հայրապետյանի 2023 թվականի հուլիսի 11-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի Վ.Տերյան փողոցի 1-ին փակուղի թիվ 10 տան բնակիչ Սոֆի Լեոնիդի Մկրտչյանի /ծնված՝ 06.03.2001թ./ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրա մորը՝ Լուսինե Ռաֆիկի Հայրապետյանին /ծնված՝ 21.09.1981թ., անձնագիր՝ AR0418089, տրված՝ 10.08.2017թ., 057-ի կողմից):

2. Լուսինե Ռաֆիկի Հայրապետյանին վերապահել ի շահ իր դստերը՝ Սոֆի Լեոնիդի Մկրտչյանի, առանց հատուկ լիազորագրի, կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Հսկողություն սահմանել նկատմամբ խնամակալ նշանակված Լուսինե Ռաֆիկի Հայրապետյանի գործունեության նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հուլիսի 13
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2023 թվականի N 672-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1017-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի 2023 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 1017-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 23 թ. Հուլիսի 14
Արաքս համայքն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի
հուլիսի 14-ի N 672-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1017-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանումը՝ 2023 թվականի գնումների պլան -փոփոխություն

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարան

Հոդված	Գնման առարկայի միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Գնման առարկայի անվանումը	Գնման ձևը /ընթացակարգ/	Չափման միավորը	Միավորի գինը / ՀՀ դրամ/	Քանակը	Ընդամենը ծախսեր /հազար դրամ/
	1	2	3	4	5	7	6
1. Տեղական ինքնակառավարման մարմիններ - 0111 ծրագիր							
		1. Ծառայություններ՝					
4212	65311100	Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայություն	ՄԱ	դրամ	35000000	1	35000,0
	65211100	բնական գազի մատակարարում	ՄԱ	դրամ	5000000	1	5000,0
4214	72411100	Ինտերնետ ծառայություն	ԳՀ	դրամ	2238000	1	2238,0
	72411700	Դոմենային անվանումներ	ՄԱ	դրամ	15000	1	15,0
	72411100	Ներցանցային միացման ծառայություններ	ՄԱ	դրամ	100000	1	100,0
	32541500	Ներքին հեռախոսային ցանցի ծառայություն	ՄԱ	հատ	36000	10	360,0
4215	66511170	Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն	ՄԱ	դրամ	100000	1	100,0
4232	72261160	Կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկում	ՄԱ	հատ	95000	12	1140,0
	72211110	E-Community համայնքների եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկում	ՄԱ	հատ	132000	12	1584,0
4234	92410000	Թերթերի բաժանորդագրություն	ՄԱ	հատ	4800	100	480,0
	92220000	Տեսանկարահանման ծառայություններ	ՄԱ	հատ	40000	17	680,0
	52111100	Տեսահսկման ծառայություններ	ՄԱ	հատ	34800	10	348,0

4239	48822100	Կայք էջի պատրաստման, սպասարկման ծառայություն	ՄԱ	դրամ	175000	1	175,0	
	79991220	Սկանավորման ծառայություններ	ՄԱ	դրամ	200000	1	200,0	
	90911110	Պատերի մաքրման ծառայություն	ՄԱ	դրամ	400000	1	400,0	
4241	45311125	Հեռախոսային ներքին ցանցի տեղադրում	ՄԱ	դրամ	300000	1	300,0	
4252	50311250	Պատճենահանման սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ	100 000	1	100,0	
	50311250	Պատճենահանման սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԳՀ	դրամ	900000	1	900,0	
	50311120	Համակարգչային սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԳՀ	դրամ	500000	1	500,0	
	50111130	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	ՄԱ	դրամ	1000000	1	1000,0	
5134	71241200	Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական ղեկավարի նստավայրի շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություններ	ԳՀ	դրամ	290000	0	290,0	
